ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՏԻՄ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգարժան ՏԻՄ ոլորտի ներկայացուցիչներ՝ համայնքի ղեկավարներ, ավագանու անդամներ, համայնքային ծառայողներ

Սրտանց շնորհավորում եմ բոլորիս մասնագիտական տոնի՝ Տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման օրվա առթիվ:

ՏԻՄ համակարգը ծառայում է որպես ժողովրդավարության հիմնասյուն, մշտապես պահանջում է ոչ միայն պատասխանատվություն, այլև կարողություն համագործակցելու՝ յուրաքանչյուրիս և բոլորիս ներուժը միավորելու:

Համայնքի ղեկավարումն ավելին է քան կառավարման գործ՝ այն կյանքի որակի բարելավման պատասխանատու դաշտ է: Չկա ավելի կարևոր նպատակ, քան այս ճանապարհին վստահել ու ապավինել համայնքի յուրաքանչյուր անդամի:

Մաղթում եմ, որ շարունակենք մեր աշխատանքը նոր նվաճումների, բարելավված համագործակցության և միասնականության ոգով:

Հավատացած եմ, որ համատեղ ուժերով ու նոր գաղափարներով առաջ կշարժվենք՝ կարձանագրենք ավելի մեծ հաջողություններ ու կլուծենք մեր առաջ ծառացած մարտահրավերները: